Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
փետրվարի 29-ի N 278-Ա որոշման

ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան, _____2024 թ.

«Ֆեդիլքո Գրուպ Լիմիթիդ» ընկերությունը (գրանցված Կիպրոսի Հանրապետությունում (գրանցման համար HE 433524, հասցե՝ Կիպրոս, ք. Նիկոսիա, Ստասանդրոու 9, թիվ 201) (այսուհետ՝ **Նվիրատու**)՝ ի դեմս ընկերության տնօրեն Անդրեաս Ուրրիսի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա,

և

ՀՀ կառավարությունը (այսուհետ՝ **Նվիրառու**)՝ ի դեմս [ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի մյուս կողմից] և հիմք ընդունելով նաև ՀՀ կառավարության 2024 թ. _____-ի _____ մասին N ___-Ա որոշումը,

յուրաքանչյուրը **«Կողմ»** և միասին՝ **«Կողմեր»,**

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ

Ա) Նվիրատուն հանդիսանում է «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության (պետական գրանցման համարը 273.120.03909, ՀՎՀՀ 01551651, այսուհետ՝ **Ընկերություն**) 100% բաժնետոմսերի սեփականատեր և ցանկանում է նվիրաբերել Նվիրառուին Ընկերության կանոնադրական կապիտալում սեփականության իրավունքով

AGREEMENT ON DONATION OF SHARES

Yerevan, _____ 2024

Fedilco Group Limited, a company incorporated under the laws of Cyprus (registration number HE 433524, address: Cyprus, Nicosia, Stasandrou 9, flat/office 201, the **"Donor"**) represented by its director Andreas Ourris , acting based on the company's charter;

and

The Government of the RA (the **"Donee"**), represented by [the head of Staff of the Prime Minister of the Republic of Armenia Arayik Harutyunyan, on the other hand] and based on the No. ___-A Decree of the Government of the RA of _____ 2024,

each a **"Party"** and together the **"Parties",**

WHEREAS

A) The donor is the owner of 100% shares of MTS Armenia closed joint stock company (state registration number 273.120.03909, TIN 01551651, the **"Company"**) and wishes to donate to the Donee 20% of the Company's shares, i.e 110,000 (one hundred and ten thousand) nominal shares, owned by the Donor in the share capital of the Company (the

իրեն պատկանող Ընկերության 20% բաժնետոմսերը՝ 110 000 (հարյուր տասը հազար) հատ անվանական բաժնետոմսերը (այսուհետ նաև՝ **Բաժնետոմսեր**), իսկ Նվիրառուն համաձայնություն է հայտնել որպես նվիրատվություն ընդունել Բաժնետոմսերը:

“Shares”), and the Donee wishes to accept the Shares as a donation.

Բ) «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությունը ունի բարձր կարևորության ռազմավարական նշանակություն Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում

B) MTS Armenia closed joint stock company has a high strategic importance in the Armenian telecommunication market

կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ **Պայմանագիր**) հետևյալի մասին.

concluded this agreement (the **“Agreement”**) on the following:

1. Սահմանումներ և մեկնաբանություն

1. Definitions and interpretation

1.1. Սույն պայմանագրում ստորև նշված տերմիններն ունեն հետևյալ նշանակությունը.

1.1. The below terms of the Agreement have the following meanings:

«ՀՀ»՝ Հայաստանի Հանրապետություն,

“RA” means the Republic of Armenia;

«Օրենք»՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք,

“Law” means the Law of the RA On Joint Stock Companies;

«Հաշվի օպերատոր»՝ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ դիտորդ խորհրդի որոշմամբ հաստատված «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով» նախատեսված անձը,

“Account operator” means the entity prescribed by the Rules On Operation Of The Unified Securities Accounting And Settlement System approved by the decision of the supervisory board of Central Depository of Armenia OJSC.

«Դեպոզիտարիա»՝ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերություն

“Depositary” means Central Depository of Armenia open joint stock company

1.2. Սույն պայմանագիրը մեկնաբանվում է միացյալ ձևով, և առանձին դրույթներ չեն մեկնաբանվում Պայմանագրի ամբողջական կոնտեքստից առանձին, այլ

1.2. This Agreement shall be construed in unified manner, and separate provisions shall not be construed in isolation from the full context of the Agreement, but shall be

մեկնաբանվում են պայմանագրի մյուս դրույթների հետ համադրելով, բացառությամբ Պայմանագրի 4-րդ գլխի:

1.3. Սույն պայմանագրի վերնագրերը կրում են օժանդակ բնույթ՝ աշխատանքը հեշտացնելու նպատակով և չեն կարող օգտագործվել Պայմանագրի մեկնաբանության համար:

1.4. Սույն պայմանագրի որևէ առանձին դրույթի անվավերությունը չի հանգեցնի դրա մյուս դրույթների և ողջ պայմանագրի անվավերությանը, եթե վերջինները հնարավոր է կատարել՝ անկախ սույն պայմանագրում անվավեր դրույթի առկայությունից:

1.5. Այն դեպքում, երբ սույն պայմանագրի որևէ դրույթ կճանաչվի անվավեր, կամ ի հայտ կգան պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության կատարման անհնարինության հանգամանքներ, Կողմերը պարտավորվում են բարեխղճորեն ջանք գործադրել այդպիսի դրույթների շուրջ նոր համաձայնություն կնքելու ուղղությամբ:

construed in conjunction with the other provisions of the Agreement, except Chapter 4 of the Agreement.

1.3. The headings of this Agreement are of an auxiliary nature for the purpose of ease of working and shall not be used for interpretation of the Agreement.

1.4. The invalidity of any seperate provision of this Agreement shall not result in the invalidity of the other provisions and the entire agreement, if the other provisions and the entire agreement might be performed regardless of the existence of the invalid provision in this Agreement.

1.5. In the event that any provision of this Agreement will be recognized as invalid, or circumstances of the impossibility of fulfilling any of the obligations under the agreement will emerge, the Parties undertake to make good faith efforts to conclude a new agreement on such provisions.

2. Պայմանագրի առարկան

2.1. Սույն պայմանագրով սահմանված պայմաններով, Նվիրատուն պարտավորվում է Նվիրառուին անհատույց որպես սեփականություն հանձնել, իսկ Նվիրառուն ընդունում է Ընկերության երրորդ անձանց իրավունքներով չծանրաբեռնված Բաժնետոմսերը, որոնք կազմում են Ընկերության կանոնադրական կապիտալի 20%:

2. Subject of the Agreement

2.1. Under the conditions set forth in this Agreement, the Donor undertakes to transfer free of charge to the Donee's ownership, and the Donee accepts the Shares, not encumbered by the rights of third parties, which constitute 20% of the share capital of the Company.

2.2. Սույնով կողմերը հաստատում են, որ Բաժնետոմսերի նկատմամբ իրավունքի փոխանցման գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը (ներառյալ՝ Բաժնետոմսերի փոխանցման հանձնարարական(ներ)ը) պատշաճ կերպով կներկայացվեն Նվիրատուի կողմից Հաշվի օպերատորին մինչև [_____] 2024 թ.:

2.3. Բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը Նվիրառուին փոխանցելու Նվիրատուի պարտականությունը համարվում է կատարված Դեպոզիտարիայի կողմից Բաժնետոմսերը Նվիրառուի անունով գրանցելու պահից:

2.4. Նվիրառուն հավաստիացնում է, որ ամբողջությամբ տեղյակ է Ընկերության ֆինանսական և իրավական վիճակի մասին:

2.5. Կողմերը սույնով ընդունում են, որ Պայմանագրի կնքման պահին Բաժնետոմսերը Քաղաքացիական օրենսգրքի 603-րդ հոդվածի իմաստով զերծ են թերություններից և Նվիրառուն նախապես հրաժարվում է Նվիրատուից Քաղաքացիական օրենսգրքի 603-րդ հոդվածի հիմքով ցանկացած և բոլոր վնասների հատուցում պահանջելու իր իրավունքից:

2.6. Սույն պայմանագրի հիման վրա Բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված Ընկերության բաժնետերերի

2.2. The parties hereby confirm that the documents required for the registration of transfer of the Shares (including the order(s) on transfer) will be duly submitted by the Donor to the Account Operator by [_____] 2024.

2.3. The obligation of the Donor to transfer the ownership to the Shares to the Donee should be considered fulfilled from the moment of registration by the Depositary of the Shares in the name of the Donee.

2.4. The Donee assures that it is fully aware of the financial and legal status of the Company.

2.5. The Parties hereby acknowledge that at the moment of the conclusion of the Agreement the Shares are free from defects and the Donee hereby pre-emptively waives its right to claim any and all damages from the Donor under the Article 603 of the RA Civil Code.

2.6. On the basis of this agreement, necessary changes shall be made in the register of the Company's shareholders related to the transfer of ownership rights to the Shares and

ռեեստրում անհրաժեշտ փոփոխությունները կատարվում և դրա համար անհրաժեշտ տուրքերն ու այլ վճարումները կատարվում են Նվիրատուի կողմից:

the necessary duties and other payments shall be made by the Donor.

3. Նվիրատուի և Նվիրառուի հավաստիացումները

3. Warranties of the Donor and the Donee

3.1. Կողմերը հավաստում են, որ գործարքը կնքվում և կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի, այլ իրավական ակտերի և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կանոնների պահպանմամբ:

3.1. The Parties assure that the transaction is concluded and executed in compliance with the Law of the RA On Joint Stock Companies, other legal acts and the provisions of the Company's charter.

3.2. Նվիրառուն հավաստիացնում է, որ ՀՀ կառավարության կամ այլ իրավասու պետական մարմինների կողմից կայացվել են բոլոր անհրաժեշտ որոշումները Պայմանագիրը ստորագրելու և դրանով նախատեսված Պարտավորությունները կատարելու համար:

3.2. The Donee assures, that all the necessary desisions have been adopted by the RA Government or by other competent state authority for signing the Agreement and performing the obligations provided for by it.

3.3. Նվիրատուն հավաստիացնում է, որ վերջինիս կառավարման համապատասխան մարմնի կողմից կայացվել են բոլոր անհրաժեշտ որոշումները Պայմանագիրը ստորագրելու և դրանով նախատեսված անհրաժեշտ գործողություններն իրականացնելու համար:

3.3. The Donor assures that all the necessary resolutions have been adopted by the relevant body of the latter's management for signing the Agreement and performing the necessary actions provided for by it.

4. Կողմերի հետագա համագործակցությունը

4. Future cooperation of the Parties

4.1. Սույնով Կողմերը միասին փաստում են իրենց ընդհանուր շահագրգռվածությունը Ընկերության աճով և հաստատում միմյանց հետ բարեխղճորեն համագործակցելու նվիր-

4.1. The Parties hereby collectively acknowledge their common interest in the Company's growth and affirm their dedication to cooperate with each other in good faith for advancing the telecommunications sphere in

վածությունը՝ Հայաստանում հեռահաղորդակցության ոլորտի առաջխաղացման համար: Նշված նպատակներին հասնելու համար Կողմերը պայմանավորվել են, որ հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ամեն դեպքում ոչ ուշ, քան Դեպոզիտարիայի կողմից Բաժնետոմսերը Նվիրառուի անունով գրանցելու պահից երկու (2) օրացուցային ամսվա ընթացքում Կողմերը բարեխղճորեն բանակցելու և կնքելու են բաժնետիրական համաձայնագիր, որը, ի թիվս այլնի, կներառի նաև հետևյալ պայմանները.

Armenia. In pursuit of the mentioned objectives, the Parties agreed that as soon as reasonably practicable, but in any event not later than two (2) calendar months from the moment of registration by the Depositary of the Shares in the name of the Donee, the Parties shall negotiate in good faith and sign a shareholders' agreement, which will, among other things also include the following terms:

4.1.1. Այն դեպքում, երբ Նվիրատուն մտադիր լինի վաճառել Ընկերության իր բաժնետոմսերը, ապա Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Նվիրատուն պարտավոր կլինի հայցել Նվիրառուի համաձայնությունը և թույլտվությունը: Նվիրառուն պարտավորվում է սույն Պայմանագրի կնքման օրվանից 5 (հինգ) տարվա ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ չվաճառել կամ չփոխանցել Բաժնետոմսերը առանց Նվիրատուի գրավոր համաձայնության: Հնգամյա ժամկետի լրանալուց հետո Նվիրատուն ունի Նվիրառուի բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք:

4.1.1. In the event the Donor intends to sell its shares in the Company, in accordance with legistlation of Republic of Armenia, it shall seek the consent and approval of the Donee. The Donee undertakes not to sell or transfer ownership of all or part of the Shares within a period of 5 (five) years from the date of this Agreement without written approval of the Donor. Following the expiration of the five year period, the Donor has preemptive right to acquire the Donee's shares.

4.1.2. Պայմանագրի 4.1.1 ենթակետով սահմանված սահմանափակումները կիրառելի չեն լինի Ընկերության ցուցակվելու դեպքում, ինչպես նախատեսված է 4.1.4 ենթակետով:

4.1.2. The limitations outlined in sub-clause 4.1.1 of the Agreement will not be applicable in case of the public listing of the Company as provided under sub-clause 4.1.4.

4.1.3. Կողմերից ոչ մեկն իրավունք չունի ամբողջությամբ կամ մասամբ տրամադրել

4.1.3. Neither of the Parties may provide all or part of their shares to the management of a third

իրենց բաժնետոմսերը երրորդ անձի կառավարմանը, եթե այլ բան գրավոր կերպով համաձայնեցված չէ Կողմերի միջև:

party, unless otherwise is agreed in written between the Parties.

4.1.4. Կողմերը սույնով ընդունում են, որ Ընկերության աճը խթանելու և Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում նորամուծություններ կատարելու նպատակով, Ընկերությունը կարող է շահավետ համարել Ընկերության ցուցակվելը գլխավոր ֆոնդային բորսայում («main stock exchange»): Հետևաբար, Կողմերը համաձայնվում են առ այն, որ հրապարակայնորեն ցուցակվելու համար Ընկերության ընդհանուր ժողովը (ձայների մեծամասնությամբ) իրավունք ունի կայացնել որոշում՝ հիմնական ֆոնդային բորսայում Ընկերության հրապարակային ցուցակվելու վերաբերյալ: Համապատասխանաբար, Կողմերը պետք է միասին իրագործեն իրենց հասանելի բոլոր քվեարկման և այլ իրավունքները և լիազորությունները, որպեսզի ապահովեն անհրաժեշտ կամ ցանկալի բոլոր գործողությունների իրականացումը՝ Ընկերության արժեթղթերի նման նախնական հրապարակային առաջարկի մեկնարկի և իրականացման համար:

4.1.4. The Parties hereby acknowledge that for boosting the Company's growth and introducing innovations to the telecommunications sphere in Armenia, the Company may find beneficial to become a public listed company on main stock exchange. Therefore, the Parties agree that for the public listing, the Company's general meeting (based on majority of votes) may adopt decisions on executing the public listing of the Company on a main stock exchange. Correspondingly, the Parties shall collectively exercise all voting and other rights and powers available to them to procure the implementation of all the actions necessary or desirable for the initiation and execution of such an initial public offering of the Company's securities.

4.2. Կողմերը սույնով համաձայնվում են, որ սույն 4-րդ գլխով նախատեսված դրույթները կարող են երկու Կողմերի փոխադարձ համաձայնությամբ վերանայվել և/կամ լրացվել սույն Պայմանագրի 4-րդ գլխով նախատեսված բանակցությունների ընթացքում: Այնուամենայնիվ, եթե Կողմերը համաձայնություն ձեռք չբերեն տվյալ հարցերի շուրջ, սույն 4-րդ գլխով նախատեսված պայմանները համարվում են Կողմերի համար վերջնական և իրավականորեն պարտադիր պարտավորություններ սույն Պայմանագրի կնքման օրվանից:

4.2. The Parties hereby agree that the provisions of this Chapter 4 may upon mutual agreement of both Parties be revised and/or supplemented during the negotiations provided for in Chapter 4 of this Agreement. However, if no agreement will be reached by the Parties on such matters, the terms provided in this Chapter 4 shall be treated as final and legally binding obligations of the Parties from the date of this Agreement.

4.3. Սույն գլխով նախատեսված կարգավորումները անկախ են Պայմանագրի 2-րդ և 3-րդ գլուխներով նախատեսված դրույթներից և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի իմաստով չեն դիտարկվում որպես հանդիպական պարտավորություն:

4.3. The provisions of this Chapter are independent from the provisions of Chapter 2 and Chapter 3 of the Agreement and are not considered as reciprocal obligations within the meaning of Article 594 of the Civil Code of the Republic of Armenia.

4.4. Հաշվի առնելով Պայմանագրի 1.5 կետը, սույն գլխով նախատեսված պայմանների անվավերությունը չպետք է հանգեցնի Պայմանագրի մյուս պայմանների կամ ամբողջ Պայմանագրի անվավերությանը:

4.4. Subject to Clause 1.5 of the Agreement, the invalidity of the provisions provided for in this Chapter shall not lead to the invalidity of the other provisions of this Agreement or of the entire Agreement.

5. Այլ պայմաններ

5.1. Սույն Պայմանագիրը ստորագրվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը և այլ կիրառելի իրավական ակտերը,

5. Miscellaneous terms

5.1. This Agreement is signed based on the Civil Code of the RA, the Law of the RA On Joint Stock Companies and other applicable legal acts, the provisions of the Donor's and the Company's charters, as well as the No. ___-A

Նվիրատուի և Ընկերության կանոնադրության դրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության _____ 2024 թ.-ի N ___-Ա որոշումը:

Decree of the Government of the RA of _____ 2024.

5.2. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և դադարում է պատշաճ կատարմամբ:

5.2. This Agreement shall enter into force upon its signing by the parties and shall be considered completed upon due execution.

5.3. Կողմերի Պայմանագրով նախատեսված ցանկացած իրավունքի չիրականացում կամ իրականացման ուշացում չպետք է դիտարկվի որպես դրանից հրաժարում:

5.3. Failure to exercise or delay in exercise of any right provided for in the Agreement by the Parties shall not be considered as a waiver thereof.

5.4. Նվիրատուն և Նվիրառուն գիտակցում և ընդունում են Պայմանագրի իմաստն ու նշանակությունը, և հաստատում են, որ Պայմանագրից ծագող իրավական, գույքային և այլ հետևանքները բխում են իրենց տնտեսական շահերից: Նվիրատուն և Նվիրառուն հաստատում են նաև, որ Պայմանագիրն արտահայտում է իրենց իրական մտադրությունները և ստորագրում են կամքի ազատ արտահայտմամբ:

5.4. The Donor and the Donee acknowledge and accept the meaning and significance of the Agreement, and confirm that the legal, property and other consequences arising from the Agreement derive from their economic interests. The Donor and the Donee also confirm that the Agreement expresses their true intentions and sign with free expression of will.

5.5. Նվիրատուն և Նվիրառուն ընդունում են, որ ցանկացած պատճառով Պայմանագրի անվավերության դեպքում այդ պահից սկսած մեկամսյա ժամկետում Կողմերը կձեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլերը Պայմանագրով հետապնդած նպատակին հասնելու համար:

5.5. The Donor and the Donee acknowledges that in case of invalidity of the Agreement for any reason, within one month from that moment, both Parties will take all the necessary steps to achieve the goal pursued by the Agreement.

5.6. Կողմերը պարտավորվում են պահպանել Պայմանագրին առնչվող տեղեկատվության գաղտնիությունը, բացառությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Պայմանագրի հետ կապված բոլոր տեղեկությունները բացահայտվում են այն անձին, ով տվել է այդ

5.6. The parties undertake to maintain the confidentiality of information related to the Agreement, except for the cases defined by RA legislation, as well as the cases when all information related to the Agreement is disclosed to the person who has given written consent to maintain the confidentiality of such information.

տեղեկությունների գաղտնիությունը պահպանելու գրավոր համաձայնություն:

5.7. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կողմերը կրում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

5.8. Սույն պայմանագրի առնչությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ այս պայմանագրից բխող կամ դրա հետ կապված բոլոր վեճերը պետք է լուծվեն դատական կարգով՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից:

5.9. Սույն պայմանագրի նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

5.10. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով: Հակասության առաջացման դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:

5.11. Սույն պայմանագիրը կնքվում է 3 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ պայմանագրի մեկ օրինակը ներկայացվում է Հաշվի օպերատորին:

5.12. Սույնով յուրաքանչյուր Կողմը կիրառելի օրենսդրությամբ թույլատրված առավելագույն չափով հրաժարվում է իրավասության, արգելանքի (ինչպես դատական վճռից առաջ, այնպես էլ դրանից հետո) և կատարման նկատմամբ անձեռնմխելիությունից (լինի դա

5.7. For non-fulfilment or improper fulfillment of the obligations provided for in this Agreement, the parties bear the responsibility provided for by RA legislation.

5.8. Disputes arising in relation to this Agreement shall be resolved through negotiations, and in case of failure to reach an agreement, all disputes arising out of or in connection with the present Agreement shall be resolved by judicial procedure by the Civil Court of General Jurisdiction of the City of Yerevan.

5.9. The legislation of the Republic of Armenia is applicable to this Agreement.

5.10. This Agreement is drafted in Armenian and English languages. In case of discrepancies, the Armenian version shall prevail.

5.11. This Agreement is concluded in 3 copies, which have equal legal force. One copy is given to each party, and one copy of the Agreement is presented to the Account Operator.

5.12. Each party hereby waives, to the fullest extent permitted by applicable law, all immunity (whether on the basis of sovereignty or otherwise) from jurisdiction, attachment (both before and after judgment) and execution to which it might otherwise be entitled in any action or proceeding in any court of any

ինքնիշխանության կամ այլ հիմքով), որից նա որևէ կերպ իրավունք կունենար օգտվելու սույն Պայմանագրի կամ սույնով նախատեսված գործարքի հետ կապված որևէ երկրի կամ իրավասության դատարանում իրականացվող դատավարական գործողությունների կամ վարույթի շրջանակներում, և համաձայնում է, որ այն չի բարձրացնի, չի պահանջի կամ չի խնդրի անձեռնմխելիություն որևէ դատավարական գործողության կամ վարույթի ընթացքում կամ նման դատավարական գործողությունից կամ վարույթից:

country or jurisdiction, relating in any way to this Agreement or any transaction hereunder, and agrees that it will not raise, claim or cause to be pleaded any such immunity at or in respect of any such action or proceeding.

6. Կողմերի ծանուցման հասցեները

_____

6. Addresses for the Notices of the Parties

Կիպրոս, ք. Նիկոսիա, Ստասանդրոու 9, թիվ 201 / Cyprus, Nicosia, Stasandrou 9, flat/office 201

7. Ստորագրություններ

7. Signatures

Նվիրատու / Donator

_____

Տնօրեն, Անդրեաս Ուրրիս / Director Andreas Ourris

Նվիրառու / Donee

_____

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյան / the Head of Staff of the Prime Minister of the Republic of Armenia Arayik Harutyunyan

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ